

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի
Հանրապետության կառավարության միջև գիտատեխնիկական
համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Բելառուսի
Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

համարելով, որ գիտատեխնիկական համագործակցությունը հանդիսանում
է երկկողմ հարաբերությունների ողջ համալիրի կարևոր բաղկացուցիչ մաս,
ընդունելով գիտության և տեխնոլոգիաների ոլորտում կոոպերացիայի
անհրաժեշտությունը,

հաշվի առնելով պատմականորեն ձևավորված գիտատեխնիկական
կապերի և գիտության ու տեխնիկայի զարգացման գործում գերակայությունների
ընդհանրությունը,

ընդունելով, որ այդպիսի համագործակցությունը կնպաստի երկու
պետությունների և ժողովուրդների միջև երկկողմ փոխշահավետ
առևտրատնտեսական կապերի ամրապնդմանը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը սույն Համաձայնագրին և իրենց պետությունների ազգային
օրենսդրություններին համապատասխան կնպաստեն իրենց պետությունների
միջև գիտատեխնիկական համագործակցության զարգացմանն ու
ամրապնդմանը:

Հոդված 2

Երկկողմ գիտատեխնիկական համագործակցության ուղղությունները
կորոշվեն՝ ելնելով երկու պետություններում գիտության և տեխնիկայի
զարգացման շահերից:

Հոդված 3

Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Կողմերի գիտատեխնիկական
համագործակցությունը կիրականացվի երկու պետությունների
նախարարությունների, այլ կառավարման մարմինների, գիտությունների
ազգային ակադեմիաների, գիտահետազոտական հիմնարկների և
կազմակերպությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների,
առանձին գիտնականների և մասնագետների կողմից՝ նրանց իրավասության
սահմաններում և ազգային օրենսդրություններին համապատասխան նրանց միջև
ուղղակի համաձայնագրերի, պայմանագրերի և կոնտրակտների հիման վրա:

Համագործակցության ընդհանուր ղեկավարումը և համակարգումն կիրականացվեն Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի կողմից: Համագործակցության իրականացման պայմանները կսահմանվեն պայմանագրերով, որոնք նախատեսում են.

- համագործակցության նպատակները և բովանդակությունը, ակնկալվող արդյունքները, նախագծերի իրականացման ժամկետները և պայմանները,
- աշխատանքների ֆինանսավորման աղբյուրները, ֆինանսական փոխադարձ պարտավորությունները,
- գիտական օբյեկտների և համագործակցության ընթացքում համատեղ հետազոտությունների արդյունքների օգտագործման կարգը,
- վիճելի հարցերի լուծման և համագործակցության ընթացքում պատճառված հնարավոր վնասների հատուցման կարգը,
- երրորդ պետությունների կազմակերպությունների, անձանց կամ միջազգային կազմակերպությունների մասնակցությունը համագործակցությանը, այդպիսի մասնակցության ֆինանսավորման և համագործակցության արդյունքների օգտագործման կարգը,
- համագործակցության ընթացքում միմյանց փոխանցվող տեղեկատվության հավաստիության, նյութերի և սարքավորումների որակի համար պատասխանատվությունը,
- համագործակցության արդյունքում ստացված մտավոր սեփականության իրավունքների բաշխման և այդ իրավունքների բաշխման ու պահպանության հարցերի կարգավորման կարգը:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կարող է իրականացվել հետևյալ ձևերով.

- համատեղ գիտական, գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական ծրագրերի և նախագծերի, ինչպես նաև Կողմերի պետությունների տնտեսությունների համար առաջնային նշանակություն ունեցող հիմնարար հետազոտությունների իրականացում, դրանց փորձաքննության փոխադարձ անցկացում,
- գիտահետազոտական աշխատանքների արդյունքների համատեղ հրատարակում,
- համատեղ գիտահետազոտական կոլեկտիվների ձևավորում, այդ թվում՝ դաշտային համատեղ հետազոտություններ և արշավախմբերի, նորարարական և այլ տիպի կազմակերպությունների համար, որոնք կապահովեն նոր տեխնոլոգիաների իրացումը և մշակումը,
- գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության, փաստաթղթերի, գրականության և մատենագիտական հրատարակությունների փոխանակություն,
- գիտական կադրերի նախապատրաստում, գիտնականների և մասնագետների փոխանակություն,

- համատեղ սեմինարների, գիտաժողովների, աշխատանքային հանդիպումների և ստաժավորումների կազմակերպման միջոցով գիտնականների և մասնագետների որակավորման բարձրացում:

Համագործակցությունը կարող է իրականացվել նաև փոխհամաձայնեցված այլ ձևերով, որոնք կապահովեն սույն Համաձայնագրի իրականացումը:

Համագործակցության ձևերը ընտրելիս և սահմանելիս Կողմերը ղեկավարվում են միմիայն գիտության զարգացման, երկու պետությունների ու ժողովուրդների տնտեսական և հասարակական առաջընթացի շահերով:

Հոդված 5

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակով Կողմերը կստեղծեն գիտատեխնիկական համագործակցության հարցերի համատեղ Հանձնաժողով:

Իր գործունեությունը կազմակերպելու նպատակով Հանձնաժողովը մշակում և հաստատում է աշխատանքային կանոնակարգ:

Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները պետք է լինեն գիտության և տեխնիկայի ոլորտներում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող առաջնային ուղղությունների քննարկումը, կոոպերացիայի նոր ոլորտների և ձևերի բացահայտումը, համատեղ ծրագրերի կազմումը և համագործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակումը:

Հոդված 6

Հաշվի առնելով գիտական հետազոտությունների և փորձակրնստրուկտորական մշակումների համաշխարհային մակարդակի պահպանման կարևորությունը, Կողմերը կօժանդակեն նոր տեխնոլոգիաների փոխանակմանը, հատուկ ուշադրություն կդարձնեն երկու պետությունների գիտնականների համար նորագույն և եզակի փորձարարական կայանքներից, սարքերից, սարքավորումից օգտվելու հարցում մատչելիության ապահովմանը, ինչպես նաև դրանց մշակման, արտադրության և ձեռք բերման կոոպերացմանը:

Հոդված 7

Կողմերը պայմանավորվում են, որ համագործակցության ընթացքում ստացված գիտական և գիտատեխնիկական տեղեկությունը, Կողմերի պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան, բաց հրապարակման տարածման ընդունված եղանակների օգտագործման շրջանակներում մատչելի կլինի համաշխարհային գիտական հասարակությանը:

Հոդված 8

Սույն Համաձայնագրի շրջանակներում համատեղ նախագծերին մասնակցած փորձագետների, գիտնականների և այլ մասնագետների

փոխանակությունը կատարվում է նախնական պայմանավորվածության համաձայն, իսկ դրա հետ կապված վճարումները՝ հետևյալ կարգով.

- գործուղող Կողմը վճարում է երկու պետությունների՝ դուրս գալու և նշանակման կետերի միջև գործուղվող մասնագետի փոխադրածախսը,

- ընդունող Կողմն ամբողջությամբ իր վրա է վերցնում գործուղված մասնագետի բնակության, սննդի, փոխադրության և այլ ծախսերն իր պետության տարածքում, ելնելով ծախսերի չափաբաժիններից, որոնք սահմանված են ընդունող Կողմի համապատասխան կարգի մասնագետների համար,

- գործուղված մասնագետի բժշկական սպասարկումը ընդունող Կողմի պետության տարածքում (ծանր հիվանդությունների կամ դժբախտ պատահարների դեպքում) ապահովվում է ընդունող Կողմի հաշվին՝ նույն պայմաններով, ինչպիսիք նախատեսված են ընդունող Կողմի աշխատակիցների համար:

Տվյալ կարգը գործում է, եթե համագործակցող Կողմերը փոխադարձ պայմանավորվածությամբ որևէ այլ կարգ չեն սահմանել:

Հոդված 9

Կողմերը, հաշվի առնելով Կողմերի պետությունների ազգային օրենսդրությունը, ապահովում են մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, որը կարող է ստեղծվել սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցության արդյունքում:

Մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների պաշտպանության և օգտագործման հարցերը կարգավորվում են սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված մարմինների և կազմակերպությունների միջև կնքված Համաձայնագրերով՝ ելնելով Կողմերի պետությունների օրենսդրության պահանջներից:

Հոդված 10

Սույն Համաձայնագիրը չի շոշափում Կողմերի այն իրավունքները և պարտավորությունները, որոնք բխում են նրանց կողմից կնքված միջազգային պայմանագրերից և համաձայնագրերից:

Սույն Համաձայնագրի դրույթներն իրականացվում են Կողմերի պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11

Պայմանավորվող կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, կարող են սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարել, որոնք կձևակերպվեն առանձին արձանագրություններով, սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կկազմեն և ուժի մեջ կմտնեն սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար սահմանված կարգով:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման և կիրառման ընթացքում ծագած վեճերը և տարաձայնությունները կլուծվեն խորհրդատվությունների և բանակցությունների միջոցով:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ երկու պետությունների ազգային օրենսդրություններով սահմանված ընթացակարգերի ավարտի մասին դիվանագիտական ուղիներով փոխադարձ ծանուցման օրվանից և գործում է հինգ տարի ժամկետով: Համաձայնագրի գործողության ժամկետն ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ երկամյա ժամանակահատվածի համար, եթե Կողմերից ոչ մեկը Համաձայնագրի ժամկետի ավարտից վեց ամիս առաջ գրավոր կարգով մյուս Կողմին չի տեղեկացնում Համաձայնագիրը դադարեցնելու իր ցանկության մասին:

Սույն Համաձայնագրի ոչ մի փոփոխություն կամ գործողության դադարեցում չի կարող փոփոխել Կողմերի ստանձնած իրավունքները և պարտավորությունները, որոնք առաջացել են սույն Համաձայնագրի շրջանակներում մինչև նման փոփոխությունների գործողության մեջ մտնելը կամ Համաձայնագրի գործողության ավարտը:

Կատարված է Երևան քաղաքում 2000 թվականի հոկտեմբերի 31-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Սույն Համաձայնագրի մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը կտրվի ռուսերեն տեքստին:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2001 թվականի մարտի 1-ից: